

**ՀԱՆԴԻՊՈՒՄ ՇԱՐԱՆ ՇԱՐՆՈՒՐԻ  
ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՎԱՆՈՒՄ**

Երեւի աշխարհում ոչ մի տեղ ծովի ալիքներն այնպես մեղմիկ ու երգեցիկ չեն, ինչպես այստեղ Սեն-Ռաֆայելի «**Հոմ Արմենիեն**» ծերանոցի պատերի տակ: Ալիքները հեռացումի երգեր են մրմնջում կյանքի վերջալույսին ապավինած ծերունիների համար: Այստեղ ծովը չի փոթորկում... ավելի ճիշտ, այլեւս չի փոթորկում...

Օղվափին արմավենիներ կան, նրանց մուգ-կանաչը դառնել է կապույտ երկնքին: Ամենուր կանաչն է անսպասելիորեն ժայթքել հողի ընդերքից, եւ ընդհանուրապէս լցրել Սեն-Ռաֆայելը: Ու այս շատրվանող կանաչների մեջ հայկական ծերանոցի:

- **Ճերանոցը բա՛նտ է, պապա,**- հարցնում է Վիլյամ Սարոյանի Ջոնին «**Իմ սիրտը լեռներում է**» պիեսի հերոսը: Ու հիմա այդ մի հատիկ նախադասությունը, որտեղից որտեղ, եկել-մեխվել է ուղեղիս մեջ:

- **Ճերանոցը բա՛նտ է, պապա:**
- **Ճերանոցի բանտ է...**
- **Ճերանոցը բանտ է...**
- **Բանտ է...**

Ինչո՞ւ է ինձ այսպես տանջում այդ մի հատիկ նախադասությունը, ի՞նչ է ըլլում ինձանից, ու ես հչ թե Ջոնիին, այլ ինձ հանգստացնելու համար, ասում են:

- **Ճերանոցը բանտ չէ... բանտ չէ... համբերիր...**

Սեն-Ռաֆայելը ութ հարյուր քման կիլոմետր հեռու է Փարիզից: Ես գնում եմ Սեն-Ռաֆայել, Հայկական Բարեգործական Միության ծերանոց, այնտեղ է ապրում Շահան Շահնուրը... Վաղուց է այնտեղ, 1959 թվականից: Ես որդեկ եմ անպայման տեսնել նրան, թեեւ գիտեմ, որ դա հեշտ բան չէ: Լսել եմ, որ տարիներ շարունակ ապրում է ներթաշված կյանքով եւ դժվարությամբ է մարդ ընդունում, մանավանդ անձանոթի:

Սարոյանին «Սիտրոնեն» մակնիշի ավտոմեքենան կուլ տվեց ճանապարհի վերջին մետրերը եւ անահմուկ կանգնեց ծերանոցի բակում: Նորից ուղեղիս մեջ արձագանքեց Սարոյանի տողը:

- **Ճերանոցը բա՛նտ է, պապա...**

Ես ականափեց նայեցի ծերանոցի պատուհաններին. երկաթ ճաղեր ու զինված պահապաններ տեսնելու վախով:

Հագար ինը հարյուր յոթանասուներկու թվականի նոյեմբեր ամիսն է՝ արեւոտ, պայծառ օր: Օղվից աղափոտ գեպիում է փչում մեր դեմքերին: Ես, դուստրս Սարինեն ու ֆրանսիացի բարեկամներս կանգնած ենք ծերանոցի բարեկարգ ու մաքուր բակում: Դեռ չէի հասցրել շուրջս զննել, երբ մեզ իրենց օղակի մեջ առան... Ես հիմա չեմ ուզում անել ծերունիները, չեմ ուզում օգտագործել այդ բառը, որովհետեւ նրանք ծերունիներ լինելուց բացի, ուրիշ մի էություն էին, ուրիշ մի բան, որոնց համար մինչեւ հիմա ոչ ոք դեռ համապատասխան անուն չի գտել... Երբ փակում եմ աչքերս, կրակերի տակ հայտնվում են նրանց դեմքերը, աչքերը, ձեռքերը, շրթունքները... ոչ, ես հրաժարվում եմ նրանց ծերունիներ կոչելուց, նրանք մասն չեն այն տատիկներին ու պապիկներին, որոնց ես տեսել եմ Երեւանի զբոսայգիներում ու փողոցներում: Նրանք ոչ թե ծերացել են, այլ հիվանդացել են մի հիվանդությամբ, որը կարող է կոչվում, կամ գուցե կարողամաս: Նրանց ոչ թե տարիներն են ծերացրել, այլ իրենց հեռավոր հայրենիքի կարոտը... Օ՛, նրանց աչքերը, ներսում բանտված տառապանքների պատուհաններ էին...

- **Ո՞ւմ կուզեք:**
- **Ո՞վ եք: Ուրկե՞ք եք:**
- **Չե՞ի մականունն ինչպե՞ս է:**
- **Որեւէ մե՞կը կփնտրեք:**

Հուլյս, հուլյս, հուլյս... հուլյսի կանթեղներ են մարմնում նրանց աչքերում: Նրանք ամեն օր սպասում են ինչ-որ մեկին, մոտիկ կամ հեռավոր մի ազգակցի, մի հարազատի, որին կոհցրել են ինչ-որ ժամանակ ու հիմա սպասում են...

Չէ, հուլյսը չի մեռնում: Երբեք, ոչ մի օր հուլյսը չի լքում մարդուն: Անպայման մի տեղից, հրաշքով կհայտնվի եղբայրը, քույրը, հորեղբայրը, մորաքրոջ տղան կամ թոռը... մեկը կգա ու իրեն կտանի այդ տնից, որը թեեւ ապահով է ու հարմարավետ, բայց... ծերանոց է: Ութսունին մոտ մի ծերունի, հայրեն, որն ավելի շատ հին երգի էր նման, քան սովորական խոսքի, ասաց:

- **Չնշածագից եմ, հարազատներս կփնտրեմ, ահա քանի տարիե՞ր վեր անոնց կսպասեմ... բայց ինձ օգնող չկա: Ես անոնց տեղը գիտեմ... Չէ, էլ չեմ ուզեր հիս կենալ... երթալ, երթալ կուզեմ: Է՛, ով զիս կլսե...**

- **Չմշկածաօցից եմ, հարազատներս կփնտրեմ... արդյո՞ք կորան. բոլորը կորան... Հիքցա գանոնք գտնել...**

Շերունքները դողում են, աչքերը վանքի խորաններ՝ ծխասել, հանգած մոմերով:

- **Հայրիկ, հո՞ւ կապրի գրագետ Հահան Հահնուրը,** - հարցնում եմ:

Օերունին երկար նայում է ինձ: «**Հայրիկ**» բառը նրան հուզել է:

- **Չի՞նք կուզեք տեսնել: Ես կրնամ առաջնորդիլ:**

- **Եթե ներդրություն չէ:**

- **Սիրով:**

Ես խնդրեցի ծանոթներիս ու Մարինեին սպասել ինձ, ինքս հետևեցի չմշկածաօցի հայրիկին, որը չնայած իր տարիքին, աշխույժ բարձրանում էր նամուրուքներով: Նա կանգ առավ երրորդ հարկի սենյակներից մեկի առջև եւ թակեց դուռը:

- **Ո՞վ է,** - լսվեց դռների հետևից:

Օերունին զգույշ բացեց դուռը:

- **Հյուր ունի՞ք,** - պատասխանեց Օերունին եւ անմիջապես հեռացավ, ինձ մենակ թողնելով Հահնուրի սենյակի բաց դռների շեմին:

Շտրվեցի: Ի՞նչ ասեմ: Ի՞նչ պատասխանեմ: Բոլոր բառերը թռել են գլխիցս ու քվում է, կոհորել եմ խոսելու ընդունակությունս:

- **Ո՞վ եք,** - նորից լսվեց նրա ձայնը:

Վերջապես սթափվեցի եւ թեթել, կատակի երանգով ասացի.

- **Հայ մը...** - բայց հետեւս դռան մեջ եմ ու սպասում եմ այն հույսով, թե դռները չեն փակվելու իմ առջև:

- **Ներս էկեք, խնդրեմ:**

Ներս մտա: Հահան Հահնուրը մահճակալի վրա կիսապառկած սուրճ էր խմում: Սենյակի միակ պատուհանը այնքան էլ մեծ չէր, այդ իսկ պատճառով սենյակը լուսավոր չէր: Մահճակալի ուղղությամբ կանգնած էր զգեստնապահարանը՝ ձվածել հայելիով: Մյուս պատի տակ կոթրիկ սեղանն էր, հավանաբար դա նաեւ աշխատասեղանն էր:

Խոշոր ակնոցի տակից ինձ էին նայում շատ խոժոռ աչքերը, այնպիսի արտահայտությամբ, որը հասկանալի այնքան էլ դժվար չէր. ո՞վ է այս տիկինը, ինչո՞ւ է եկել, ի՞նչ է ուզում: Հարցականներով լեցուն հայացքը կախվել էր կրաս:

- **Ես Հայաստանից եմ,** - թոթվեցի, հուզմունքս զսպելով:

Նա արագ անկողնուց վեր ելավ, կանգնեց իմ դիմաց: Ես տեսա միջահասակ, թիկնեղ, արտահայտիչ դիմագծերով, արնական կեցվածքով Հահան Հահնուրին, որի մասին կարդացել էի, լսել ու երեւակայությանս մեջ ստեղծել նրա կերպարը: Հահան Հահնուրը շատ նման էր ինքն իրեն:

- **Ի՞նչ կուզեք,** - հարցրեց նա աչքերին մեջ նայելով:

- **Ես հիյուր եմ Փարիզում, եկա Ձեզ տեսնելու:**

- **Նստեցեք, խնդրեմ,** - սեղանի մոտ պոռռ առաջարկելով, պսպաց նա:

Նստեցի: Մի պահ լռություն տիրեց: Հահնուրը նայում էր ինձ:

- **Ի՞նչ լուր Հայաստանեն...**

- **Բավական ժամանակ է, ինչ բացակայում եմ Հայաստանից: Ես այստեղ՝ Սեն-Ռաֆայել եկա ֆրանսիացի բարեկամներիս ընկերակցությամբ: Օտար եմ, սակայն շատ եմ հետաքրքրվում Հայաստանով: Նրանք ֆիլմ են պատրաստել Հայաստանի մասին եւ ցանկություն հայտնեցին նաեւ Ձեզ հետ ծանոթանալ, ֆրանսուհի կինոռեժիսոր էւ օպերատոր Լյադին Ռոբինն է էլ իր մայրը:**

- **Այն երկու տարեց ֆրանսուհիներն որ. անրնց ֆիլմը ես առիթ ունեցա տեսնելու Փարիզ եւ, ճիշտ ըսելով, շատ հավնեցա, միայն քիչ մը երկար տեղեր կային: Կրնային նվերի մեծ ինել, սակայն ֆիլմը հետաքրքիր էր եւ բավական բազմություն կախ ջուջադրելու ատեն: Բայց պետք է խնդրեմ, ներողամիտ ուլաք, ես չեմ կրոնար զիդներ ընդունիլ:**

- **Չեմ պնդում,** - եղավ իմ պատասխանը, բայց ներքուստ անհանգիստ եմ ինչպե՞ս պետք է խոսք բացեմ, որպեսզի համոզեմ իրեն ձայնագրվելու եւ նկարահանվելու:

- **Պարոն Հահնուր, երեւի գիտեք, որ երեւանի ռադիոն հաճախ է հնչեցնում Ձեր «Պճեղ մը անուշ սիրտ» պատմվածքը:**

- **Այո, գիտեմ...**

- **Չէ՞ք քանականա արդյոք Նոր տարվա առիթով խոսք ունենալ, ես սիրով կուզեմայի ձայնագրել եւ նկարահանել Ձեզ:**

- **Ինձ ծայնագրել... ներող եղեք, խնդրեմ, քիչ մը տկար եմ...**

Իմ այն հարցին, թե նամակագրական կամ ունի՞ արդյոք Հայաստանի հայ գրողների հետ, նա պատասխանեց.

- **Անշուշտ, կարեն եւ իրենց հրատարակած գրքերն այ կողմեն: Կկարդամ, մանավանդ, երիտասարդ ստեղծագործողներու՝ գիրքեր, սակայն հմանք անիտեք եմ, հետադարձ հանցնելոր չեն գրել, ինչ ինչպես պիտի պատասխանեմ իրենց: Ես կուզեմայի շատ ու շատ նամակներ մտանալ, եւ նամակներս այ չտպանգրվեիլ մամուլին մեք, ինչպես օրինակ մեկը, որ Բելոուք կրնակի, անուշը կարծւոր չէ, նամակ կարն ինձի, թե պետք է մայագրութայն տա Գուրգեն Մահարու եւ իմ անձնական նամակները: Անիկա իրելէ բարոյական իրավունք չունի այդ ընելու առանց իմ համաձայնության, չեմ**

*հասկնալ, ինչպե՞ս է, որ իմ նամակները կգտնվին անոր քով, զայրացուցիչ է...  
Ահալկալի կոնսեն եք:*

*Ասիկա, անշուշտ Չեզ չի վերաբերիր, այն խնդիրն ուրիշ է...*  
Համոզելու մի վերջին հնարավորություն օգտագործելով, ասացի:  
- Փարիզում եղան պրոֆեսոր Սիրարիի Տեր-Ներսեսյանի մոտ, նա  
նույնպես մի քիչ նեղվեց, երբ ծայնագրող սարքը տեսավ, սակայն շուտով  
մոռացավ ծայնագրիչի ներկայությունը, եւ մեր խոսակցությունը ծայնագրվեց  
ամբողջությամբ:

Իմ պնդումներն ավելորդ էին, Շահնուրը համառ էր ու վճռական:  
- Այն ժամանակ պիտի խնդրեմ, որ թույլ տաք աղջկան կանչեմ այստեղ:  
Նա մեծ ցանկություն ունի ծանոթանալու Չեզ հետ:  
Եւ առանց սպասելու խնդրանքիս պատասխանին, սլացա ներքեւ,  
վերցրեցի լուսանկարչագան սարքը, հուշանվերներն ու Մարիների հետ  
բարձրացա վերեւ:

Շահնուրը, երբ տեսավ աղջկա, բուրդովին փոխվեց, դարձավ մեղմ ու  
բարի, կարծես քիչ առաջվա Շահնուրը չէր դիմացինս:  
- *Անուր ի մէ է, պնուշիկս,* - Մարիների մագերի շոյելով, հարցրեց նա:  
- *Անուկնացանք չէ տնկավին,* - հարցրեց ինձ, Մարիներից հեռանալով:  
- *Ոչ, դեք ժամանակը չէ,* - ասացի ես:  
- *Ժամանակը չէ... Ժամանակ...* - խոշոր աչքերը խոնարհեց ու  
շարունակեց խոսել, - *եւ կրնամ ունել միայն, որ տղայնադոր պետք է*  
*ամրունակն, մինչ քսանը անաջին անգամ, այնուհետեւ, մինչեւ քառասունը*  
*երկրորդ եւ երրորդ անգամ քառասունն վերջ:*

- *Բայց, կարծես, Դուք այդպես չեք վարվել,* - ինչ-որ մի համարձակությամբ  
ասացի ես ու հետո անհարմար զգացի: Նա հանկացավ այդ, ժպտաց ու կիկնեց  
քիչ առաջ սասձ նախադասությունը:  
- *Երբեմն խենթություն կուզա վրաս եւ խենթություններ կընեմ, թող*  
*տարօրինակ չթվա Չեզի:*

Երբ պատիաստվեցի իրեն լուսանկարելու, նա անմիջապես վրայից  
հանեց գորշ պուլովերը եւ սպիտակ, մաքուր վերնաշապիկով կանգնեց  
Մարիների կողքին: Նա նկարվեց նաեւ ինձ հետ, հետո առանձին: Բայց, ցավոք,  
սենյակի լուսավորվածությունը բավարար չէր գունավոր ժապավենի համար, եւ  
լուսանկարներն այնքան էլ հաջող չստացվեցին:

Երբ սեղանին դրեցի նոյնակի շիշը, սեւ խավիար եւ Կոմիտասի  
դիմաբանդակի փայտի վրա, նա հուզվեց:  
- *Բայց ինձ արգիլված է խմելը:*  
- *Դո՞ք չէ, հյուրերի կիսուները,* - ասացի:

Կոմիտասի դիմաբանդակը շատ ուրախացրեց նրան. պայծառացավ,  
խոհուն ու երկար մայեց նրան, հետո տեղավորեց սեղանի վրա եւ կարծես մի  
տեսակ հաճելի զգացողություն իջավ վրան:

Ես սպասում էի, որ նա կնկսի հարցեր տալ, թե իր գրքերից որն են  
կարդացել, որ հերոսին են հավանում, որին ոչ: Բայց նա ուրիշ բանի մասին էր  
մտածում. միտքը զբաղված էր իրեն հուզող այլ հարցերով, որոնք հավանաբար  
ավելի էին անհանգստացնում նրան:

- *Տիկին Աննայան, նախ կուզեմ իմանալ, որեւէ ազգակցական կապ ունի՞ք*  
*Գուրգեն Մահարը հետ:*

- *Ոչ, ծնողներս հարբերդից են...*  
- *Ո՞վ ունիք:*  
- *Հայր, մայր, երկու եղբայր եւ քույր:*  
- *Այդ լավ է, հպրագալուներ դուննալը երջանկություն է,* - ասաց նա ու  
նորից խորհաւորվեց մտքերի մեջ, հետո դարձավ դեպի ինձ:

- *Սիրելի Գոհար, սեր այս տունին տնօրենուհիին՝ տիկին Սիրան*  
*Փայիագլանի հետ, ազնվազույն մարդ մը, մի քանի ամիս առաջ շրջեցիք*  
*գրեթէ հոջ Զրանսիան, հրայնագի հայկական ռոնոյ հուշարձան մը գնանք,*  
*ընդօրինակեմք եւ կանգնեցնեմք մեր ծերանոցին գերեզմանատանը:*  
*Հայկական հուշարձան մի պետք է հայկական ծերանոցի գերեզմանոցի*  
*համար, նախ ո՞ր սուղ չլուծ, բայց ճաշակակող ուլա,* - ասաց նա աչքերիս մեջ  
նայելով սորմորուն ու խոր ցավով, որ ոչ մի կերպ նկարագրել չի կարելի,  
որովհետեւ այդ զգացմունքներն արտահայտելու համար դեռ բառեր չեն  
հորինվել, - *Կրնա՞ք արդյոք օգտակար ուլա,* - շահունակեց նա, հետո հույսի մի  
ժպիտ խաղաց դեմքին ու համոզված ասաց:  
- *Հայ ծարտարպայետներու գրքեր, ալբոմներ ուղարկեցեք ընտրության*  
*համար... իհարկեւ, եթե ներդրում չէ:*

- *Ի՞նչ ներդրում, անպայման կուղարկեմ,* - խոստացա, ես ու այնպիսի մի  
տխրություն իջավ վրաս, որ ակամայից խոնարհեցի գլուխս:

- *Գիտե՞ք արդյոք,* - նորից սկսեց խոսել Շահան Շահնուրը, - *մեր*  
*ծերանոցում մեզ իմն կա: Նրանք նույնպես ոչ ոք չունին: Ուրիշ ազգի*  
*ծերանոցներ գանոք ներս չառին, բայց մեր տնօրենուհին սիրով ընդունեց:*  
*Կխնորեմ հուշարձաններու ալբոմները չմոռանաք...* - ասաց Շահնուրն ու  
հայացքը հարեց պատուհանին. այնտեղից երեւում էր մի բուռ կապույտ  
երկինք, որի մեջ փշրվել էր արեւը:

Հասկացա, որ Շահնուրը հոգնել է, որ մենք պետք է հրաժեշտ տանք: Ես ու Սարինեն ոտքի ելանք: Էուր խոնարիվեցինք նրա առջեւ, մնաս բարով ասագինք ու դուրս եկանք:

Շահան Շահնուրը ուղեկցեց մեզ մինչեւ դուռը:  
Վերադարձա երեւան: Մինչ պատրաստվում էի ծանոթ ճարտարապետների օգնությամբ գտնել ու Շահան Շահնուրին ուղարկել հայկական հուշարձանների ավերմը, Փարիզից հասավ ողբագին լուրը:

«... Հայրենի հողեն ու իր ծննդավայրեն շատ ինչու, Ֆրանսիայի մայրաքաղաքի մեջ, ջուրտ հողին հանձնուեցավ հյուծված մարմինը հայ գործի մը...»: Ակամայից հիշեցի Սեն-Ռաֆայելի հայկական ծերանոցը, հիշեցի այն ծերունիներին, որոնք շրջապատել էին մեզ ու մրմնջում էին.

- *Պոք հա՛յ եք, Հայաստանն է՞ եք:*

- *Սենք ալ հայ եք, մենք ալ տուն կուզենք երթալ:*

Հիշում եմ նրանց աչքերը ծխասել խորանների, հանգած մոմերով, ու այդ բոլորի մեջ տեսնում եմ Շահան Շահնուրին, երգով նահանջողին, որ պարփակվել էր իր փոքրիկ սենյակի մեջ եւ, ով գիտե ինչ էր խորհում, ինչ էր երագում իր տարաբախտ քույրերի ու եղբայրների մասին, որոնց համար այլևս նահանջելու տեղ չկար:

1972թ., նոյեմբեր, Սեն-Ռաֆայել